



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

15 ՀՈՒԼԻՍԻ 2022թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Վաղարշակ Ամիրխանյանը, Նարեկ Անտոնյանը, Անահիտ Առաքելյանը, Վարդան Ասատրյանը, Լենդրուշ Արշակյանը, Վարդուհի Բարսեղյանը, Անահիտ Հակոբյանը, Քրիստինե Մանուկյանը, Արթուր Մուրադյանը, Գևորգ Մուրադյանը, Պետրոս Ստեփանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Տիգրանյանը, բնակավայրերի վարչական ղեկավարներ Արտաշես Ղարիբյանը, Սևակ Գաբրիելյանը, Արտակ Թովմասյանը, Բաղդասար Թովմասյանը, Անդրանիկ Մեջլումյանը, Ջոհրակ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սիրանուշ Նիկողոսյանը, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի բաժնի պետ Գայանե Արմենակյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորայր Սարգսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/*

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի 2022 թվականի հուլիսի 15-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին .

2) Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին .

3) Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 31 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 153-Ա/

2.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 83 հոդվածի 2-րդ մասի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի՝ Նաիրի **համայնքի ավագանին որոշում է.**

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին՝ համաձայն 1-5 հավելվածների:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 154-Ա/

3.Լսեցին

**ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի <<Հանրային ծառայություն>> ծրագրի 5122 հոդվածով 1560.0 հազար դրամի ձեռքբերված գույքը ավելացնել Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 28 որոշմամբ հաստատված գույքագրման ցուցակի N1 հավելվածում:

2. Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի <<Եղվարդի բարեկարգում և բնակֆոնդ>> ՀՈԱԿ-ի <<Աղբահանություն>> ծրագրի 5129 հոդվածով 1800.0 հազար